ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԱՅԳԵՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«29» նոյեմբերի 2016թ. թիվ 33 -Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետով՝ համայնքի ավագանին

որոշում է

1. Համայնքի ղեկավարի վարձատրության չափը 2017թ. համար սահմանել 280.000դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

Այգեհովիտ համայնքի ղեկավար՝ Լ. Գրիգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԱՅԳԵՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«29» նոյեմբերի 2016թ. թիվ 34 -Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՀՈՂԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով տնտեսական իրավիճակը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով՝ համայնքի ավագանին

որոշում է

1.Սահմանել 2017թ. համար համայնքի սեփականություն համարվող տեխնիկայի օգտագործման հետևյալ վարձավճարները.

ա/ կոմբայնի 1 հա արտհունձի վարձավճարի չափը 9.000դրամ,

որից եկամուտ՝ 4.000 դրամ,

բ/ մամլիչ բարդոցիչի 1 հա-ի վարձավճարի չափը 9.000դրամ ,

որից եկամուտ՝ 3.000 դրամ,

գ/ տրակտորի 1 հա վարի վարձավճարի չափը 9.000դրամ,

որից եկամուտ՝ 3.000դրամ:

2. Վարձակալական հողերի վարձավճարի տարեկան չափը սահմանել 1հա-ի համար 15.000 դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017թ. հունվարի 1-ից:

Այգեհովիտ համայնքի ղեկավար՝ Լ. Գրիգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԱՅԳԵՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«29» նոյեմբերի 2016թ. թիվ 35 -Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԱՄԵՆԱՄՍՅԱ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին

որոշում է

1. Մանկապարտեզ հաճախող յուրաքանչյուր երեխայի ծնողական վճարի չափը թողնել նույնը՝ ամսական 2500 ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017թ. հունվարի 1-ից:

Այգեհովիտ համայնքի ղեկավար՝ Լ. Գրիգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԱՅԳԵՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«29» նոյեմբերի 2016թ. թիվ 36 -Ա

ԱՅԳԵՀՈՎԻՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին լսելով և քննարկելով համայնքի ղեկավարի առաջարկությունները գյուղապետարանի աշխատակազմի, մանկապարտեզի և մշակույթի տան աշխատակակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի մասին, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով՝

որոշում է

1. Հաստատել.
   Այգեհովիտի գյուղապետարանի, մանկապարտեզի և մշակույթի տան աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի, հավելված 2-ի և հավելված 3-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

Այգեհովիտ համայնքի ղեկավար՝ Լ. Գրիգորյան

Հավելված 1

Այգեհովիտ գյուղական համայնքի ավագանու

201 6 թվականի 29 նոյեմբերի N 36 - Ա որոշման

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 16
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (դրամ)	հավելավճար (դրամ)	Ամսական աշխատավար (դրամ)
1	Համայնքի ղեկավար	1	280.000	0	280.000
	Հայեցողական պաշտոններ				
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	175.000	0	175.000
3	Համայնքի ղեկավարի օգնական	1	146.000	0	146.000
	Համայնքային ծառայողներ				
4	Աշխատակազմի քարտուղար 1.2-1	1	175.000	0	175.000
5	Գլխավոր մասնագետ-գյուղատնտես 2.3-1	1	149.000	0	149.000
6	Առաջատար մասնագետ-հաշվապահ 3.1-1	1	148.000	0	148.000
7	Առաջատար մասնագետ-հողաշինարար 3.1-2	1	148.000	0	148.000
8	Առաջին կարգի մասնագետ3.2-1	1	146.000	0	146.000
9	Երկրորդ կարգի մասնագետ 3.3-2	1	144.000	0	144.000
	Տեխսպասարկման անձնակազմ				
10	Համակարգչային օպերատոր	2	146.000	0	292.000
11	Ցրիչ	1	72751	0	72751
12	Հավաքարար	1	72751	5152	77903
13	Պահակ	1	72751	5152	77903
14	Բանվոր	1	146.000	0	146.000
15	Պարետ	1	72751	0	72751
	ընդամենը	16	2094004	10304	2250308

Աշխատակազմի քարտուղար _____ Ս. Ղարագեոյան

Հավելված 2

Այգեհովիտ գյուղական համայնքի ավագանու

201 6 թվականի 29 նոյեմբերի N 36 - Ա որոշման

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 18
2. Մանկապարտեզի /ՀՈԱԿ-ի/ հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (դրամ)	հավելավճար (դրամ)	Ամսական աշխատավարձ (դրամ)
1	Տնօրեն	1	120.000	0	120.000
2	Հաշվապահ	1	95.000	0	95.000
3	Դաստիարակ	2	80.000	0	160.000
4	Դաստիարակ	1	86.000	0	86.000
5	Երաժշտության դաստիարակ	1	72751	0	72751
6	Դաստիարակի օգնական	3	72751	0	218253
7	Լվացքարար	1	72751	0	72751
8	Խոհարար	1	72751	0	72751
9	Տնտեսվար	1	72751	0	72751
10	Բակապահ	1	72751	0	72751
11	Պահակ	1	72751	0	72751
12	Բուժքույր	1	72751	0	72751
13	Գործավար	1	72751	5152	77903
14	Խոհարարի օգնական	1	72751	5152	77903
15	Օժանդակ բանվոր	1	72751	0	72751
	ընդամենը	18	1181261	10304	1417067

Աշխատակազմի քարտուղար _____ Ս. Ղարագեոյան

Հավելված 3

Այգեհովիտ գյուղական համայնքի ավագանու

201 6 թվականի 29 նոյեմբերի N 36 - Ա որոշման

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՀՈԱԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ _11__
2. Մշակույթի տան /ՀՈԱԿ-ի/ հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (դրամ)	հավելավճար (դրամ)	Ամսական աշխատավարձ (դրամ)
1	Տնօրեն	1	120.000	0	120.000
2	Հաշվապահ	1	72751	5152	77903
3	Գրադարանավարուհի	2	72751	5152	150654
4	Ֆիզ. մեթոդիստ	1	72751	5152	77903
5	«Ըիտանիքի և երեխայի աջակցության կենտրոնի» համակարգող	1	72751	5152	77903
6	Համակարգչային օպերատոր	1	72751	5152	77903
7	Հավաքարար	1	85000	0	85000
8	Պահակ	1	72751	5152	77903
9	Կազմակերպչական գծով մասնագետ	1	72751	5152	77903
10	Մեթոդիստ	1	72751	0	72751
	ընդամենը	11	787008	36064	895823

Աշխատակազմի քարտուղար _____ Ս. Ղարագեդյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԱՅԳԵՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«29» նոյեմբերի 2016 ԹԻՎ 37-Ն

2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով Այգեհովիտ համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հաստատել 2017 թվականի համայնքի բյուջեն՝
   ա/ եկամուտների գծով -83653,7 հազար դրամ,
   բ/ ծախսերի գծով -97397,1 հազար դրամ,
   գ/ դեֆիցիտի ծածկմանն ուղղված միջոցներ -13743,4 հազար դրամ:
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ (հատված 1):
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառական դասակարգման՝ (հատված 2):
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման՝ (հատված 3):
5. Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ (հատված 4):
6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ (հատված 5):
7. Հաստատել համայնքի բյուջեի բյուջեի ծախսերն ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ (հատված 6):
8. Սահմանել, որ ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունները:
9. Թույլատրել համայնքի ղեկավարին՝
   ա/ գանձապետական հաշվի 2016 թվականի տարեվերջյան ազատ մնացորդն ինքնուրույն ներառել 2017 թվականի բյուջեի եկամտային մասում և ծախսային մասում ընդգրկել առաջնահերթություն պահանջող ծախսերի ֆինանսավորման համար,
   բ/ հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետը, համայնքի բյուջեում կատարել փոփոխություններ, որոնց հանրագումարը չի կարող գերազանցել հաստատված ծավալի 15-%ը:

Համայնքի ղեկավար Լ. Գրիգորյան

Հավելված 1
Այգեհովիտ համայնքի ավագանու
29.11.2016թ. թիվ 37-Ն որոշման

2017թ. բյուջեի եկամուտների ձևավորման աղբյուրներ են հանդիսացել.

1.Հողի հարկ –« Իջևանի համայնքների միության» տվյալների համաձայն 2016թ. հողի հարկը կազմում է - 4,349,617 ՀՀ դրամ:

2. Պահուստային հողերի վարձակալման հարկ – նախատեսվում է 500,000 դրամ, որից 200,000դրամը 11 հա նոտարական գրանցում ստացած պայմանագրերով, 150,000 դրամը՝ 10 հա ոչ նոտարական գրանցմամբ մեկ տարվա պայմանագրով տրվող հողատարածքների համար, քանի որ ավագանու 29.11.2016թ. թիվ 34-Ն որոշմամբ 2016թ. համար 1հա վարձակալական հողատարածքի արժեքը սահմանվել է 15.000 դրամ:

3. Գույքահարկ – Ըստ «Իջևանի համայնքների միության» տվյալների ֆիզիկական անձանց գույքահարկի գումարը կազմում է 5,614,296դրամ:

4. Տեղական տուրք – նախատեսվում է 100.000 դրամ:

5.Այլ գույքի վարձակալությունից մուտքեր - 200.000 դրամ, որից 120.000 դրամը կոմբայնի 30 հա արտհունձից ստացված եկամուտ, 40.000 դրամը՝ մամլիչ բարդոցիչից ստացված եկամուտ, 40.000դրամը՝ տրակտորի կատարած վարից ստացված եկամուտ/ հիմքը. ավագանու 29.11.2016թ. թիվ 34-Ն որոշմամբ 1հա արտհունձից ստացվող եկամուտ սահմանվել է 4000 դրամ, մամլիչ բարդոցիչից ստացված եկամուտը 1հա սահմանվել է 3000 դրամ, տրակտորի մեկ հեկտարի վարից ստացված եկամուտը սահմանվել է 3000 դրամ:

6. Բյուջեում արոտավայրերից հարկեր չեն նախատեսվում, քանի որ նշված տարածքներն ամբողջությամբ գտնվում են սահմաններին մոտ և որպես արոտավայրեր չեն նախատեսվում:

2016թ. ՀՀ պետ. բյուջեից համայնքին տրամադրվել է 72,889,800 դրամ դոտացիա, որից 68,668,800 ՀՀ դրամը պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա , իսկ 4.221.000դրամ համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող ՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքներում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների պետության կողմից փոխհատուցվող գումարներ:

Բյուջեի ծախսային մասի բաշխման ուղղությունները.

Գյուղապետարան

Հոդված 4111	Աշխատավարձ	29. 000. 000 դրամ
Հոդված 4112	Պարգևատրումներ	800 000դրամ
Հոդված 4212	Էներգետիկ ծառայություններ	1.200.000 դրամ
Հոդված 4214	Կապի ծառայություններ	300.000 դրամ
Հոդված 4216	Գույքի և սարքավորումների վարձակալություն	700.000 դրամ
Հոդված 4221	Ներքին գործուղումներ	300.000 դրամ
Հոդված 4232	Համակարգչային ծառայություններ	120.000 դրամ
Հոդված 4233	Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառ.	30.000 դրամ
Հոդված 4234	Տեղեկատվական ծառայություններ	100.000 դրամ
Հոդված 4239	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	120.000 դրամ
Հոդված 4241	Մասնագիտական ծառայություններ	200.000 դրամ
Հոդված 4261	Գրասենյակային նյութեր	800.000 դրամ
Հոդված 4251	Շենքերի և կառույցների ընթ. նորոգ. և պահպ.	1.000.000 դրամ
Հոդված 4269	Հատուկ նպատակային այլ նյութեր	700.000 դրամ
Հոդված 4729	Այլ նպաստներ բյուջեից	7.800.000 դրամ
Հոդված 4819	Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	690.000 դրամ
Հոդված 4823	Պարտադիր վճարներ	100.000 դրամ

Պահուստային ֆոնդ՝

Հոդված 4891	Վարչական բյուջե	7.113. 700 դրամ
Հոդված 4891	Ֆոնդային բյուջե	3.743.400 դրամ

Ֆոնդային բյուջե՝

Հոդված 5121	Տրանսպորտային սարքավորումներ	11.000.000 դրամ

Նախադպրոցական կրթություն՝ 19.850.000 դրամ,

որից՝

Համայնքի մանկապարտեզում գործում են երեք խմբեր՝ 93 երեխա

Աշխատավարձ	17.150.000 դրամ
Գրասենյակային ապրանքներ և նյութեր	200.000 դրամ
Սննդամթերք	600.000 դրամ
էներգետիկ ծառայություններ	500.000 դրամ
Բնական գազ	1.100.000 դրամ
Գործուղում	50.000 դրամ
Ինտերնետային ծառայություն	72.000 դրամ
Սանիտարական ստուգման վճար	140.000 դրամ
Այլ ծախսեր	38.000դրամ

Մշակույթի տուն 11.530.000 դրամ

որից՝

Աշխատավարձ	10.908.000 դրամ
Գրասենյակային ապրանքներ	50.000 դրամ
էներգետիկ ծառայություններ	200.000 դրամ
Վառելափայտ	120.000 դրամ
Այլ ծախսեր	10.000դրամ
Կապի ծառայություններ	102.000դրամ
Հատուկ նպատակային այլ նյութեր	140.000 դրամ
Այլ մշակութային կազմակերպություններ	900.000 դրամ

Այգեհովիտ համայնքի ղեկավար՝ Լ. Գրիգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԱՅԳԵՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«29» նոյեմբերի 2016 ԹԻՎ 38- Ա

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1 – ին մասի 2 – րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության 70 հոդվածի 3 – րդ մասով, 5 – րդ մասի 1 – ին պարբերությամբ և հիմք ընդունելով կատարված վերլուծությունների արդյունքները համայնքի ավագանին

որոշում է

1. Տավուշի մարզի Այգեհովիտ համայնքի ավագանու մարտի 25 – ի <<Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը հաստատելու մասին >> թիվ 9 – Ն որոշման 6 հավելվածի 4 աղյուսակում կատարել լրացում ավելացնելով <<Ջրի ներքին ցանցի կառուցում>> տողը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշումն ընդունելու հաջորդ օրվանից:

Այգեհովիտ համայնքի ղեկավար՝ Լ. Գրիգորյան